

ARDSHININVESTBANK  
Close Joint Stock Company

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 Լ

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ  
ԱՄՍԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԵՎ ԻՆՆ ԱՄՍԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին», ՀՀ «Բանկերի և  
բանկային գործունեության մասին» օրենքները և «Գրանթ Թորնթոն Ամիո» ՍՊԸ կողմից  
30.09.2007թ. դրությամբ ներկայացված Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններն  
ու անկախ աուդիտորի եզրակացությունը «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական  
ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ամփոփել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի առաջին ինն ամիսների  
(հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ) ֆինանսատնտեսական արդյունքները:

2. Հաստատել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի առաջին ինն ամիսների  
(հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ) ֆինանսական հաշվետվությունները, այդ  
թվում «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի հաշվեկշիռը 2007 թվականի  
սեպտեմբերի 30-ի դրությամբ համաձայն կից հավելվածների:

3. «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2007 թվականի առաջին ինն ամիսների  
ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված 3 009 116 393,10 (երեք  
միլիարդ ինն միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար երեք հարյուր իննսուներեք դրամ  
տասը լումա) հայկական դրամ գումար գուտ շահույթը (հարկերի վճարումից հետո  
մնացած) բաշխել հետևյալ կերպ՝

ա) պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) մասհանում (գուտ շահույթի  
գումարի 5 տոկոսի չափով)՝ 150 455 819,66 (մեկ հարյուր հիսուն միլիոն չորս հարյուր  
հիսունհինգ հազար ութ հարյուր տասնինը դրամ վաթսունվեց լումա) հայկական դրամ:

բ) մնացած 2 858 660 573,45 (երկու միլիարդ ութ հարյուր հիսունութ միլիոն վեց  
հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր յոթանասուներեք դրամ քառասունհինգ լումա)  
հայկական դրամ գումարը ուղղել «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական  
ընկերության «Ընթացիկ տարվա շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Խ. ԶԱՔԱՐՅԱՆ